



ԵՐԿ-ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

TO ADVERTISERS.
This paper has an extensive circulation among the Armenians throughout the United States and the principal cities of the world. It is an excellent medium for domestic and international advertisements, securing the very best results.
Rates of advertising will be found on the fourth page.

— ՄԵՐ ՍԳՁՈՒՆՔԻ ԱԶԳԻՆ ՍԿՁՈՒՆՔԻՆ Է, ՄԵՐ ՔՈՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԱՇԽԱՏԻՔԻ ՔՈՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ — ԱՐԱՐԱՏ, Սեպտեմբեր 30, 1876.

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1869. ESTABLISHED AT CONSTANTINOPLE. ՆՈՒՆ ԵՐԿ, ՀԻՆԳՇԱԹԻՐ, ԱՊՐԻԼ 9 1891. NEW YORK, THURSDAY, APRIL 9 NEW VOLUME I NO. 8

ՀԱՅԱՍՏԱՆ
Ի ՆՁՊԵՍՈՐԷ:

Հեռանալու մեր մեծանուն հայ-
րենակից և Մշակի խմբագիր Պ. Գրի-
գոր Արծրունի 1879 ին թիֆլիսի
Արհեստագործական ընկերության և Ժո-
ղովարանին մեջ ընթանալիս հետաքր-
քական հրապարակախոսությունն է,
որ յերևույթի ներկայ Հայաստանի բնա-
կան և արտադրիչ հարստության
վրայոք կարեւոր տեղեկություններ
լի է, և ամեն Հայու ուսումնասիր-
ությունն արժանի:

Այս հրապարակախոսությունն
այս անգամ Լոնդոնի Հայաստանի
մեջ արտատպուած ըլլալով նորա
պարտիքը դուրս «Արարատ» մեջ
վերատպուած: Կը յուսուամք թէ ա-
մեն կարգի ազգայինք պիտի օգտին
Մշակի մեծաշաւք խմբագրին
տուած այն կարեւոր տեղեկութիւն-
ներէն, զի մեզ զմեզ պէտք է ճա-
նաչեմք որպէս զի կարենամք ինք-
զինքնիս այլոց ալ ճանչնել:

Ա

Անդրակովկասից դէպի հարաւ
գտնուած է Մեծ-Հայաստանի, նորա-
նից դէպի արեւմուտք տարածուած է
Փոքր-Հայաստանը: Մեծ-Հայաս-
տանից աւելի նաւաջ Հայոց ազգա-
բնակությունն ունի, իսկ այդ վերջին
երկրից դէպի հարաւ գտնուած է
Կիլիկիա, որ յայտնի է քաղ լեռնա-
բնակ Հայերով: Սրանք են Մեծ-Հա-
յաստանի գլխաւոր կէտերը: Եր-
գրում (Կարին), Հաւան-Ղալա, Կար-
ման, ինչպէս, Երզնկա, Բայազէթ, Գիս-
բիւր, Կիսկիւն, Ալաշկերտ, Բայազէթ,
Վան, Բիթլիս (Բաղէշ), Մուշ, Սիւրբ,
Դիարբէքլի (Տիգրանակերտ), Երե-
ւան, Սարգիս: Այդ բոլոր նշանա-
ւոր կէտերը շրջապատուած են երկու
երեք հարիւր գիւղերով, որոնց երեք
չորրորդականը գրեթէ, Հայաբնակ
են: Փոքր-Հայաստանում էս կը յի-
շեմ հեռեւեալ տեղերը: Արապկերտ,
Կամախ, Գիւմրի-Սիւնի, Տրապի-
զոն, Բիզէ, Թիստա (Եւքոկի), Սիւլա
(Սեւաստիա), Կարապետար, Կէտիկ,
Ամասիա, Փոքր-Հայաստանի արեւմտ-
եան ծայրում և Մարաշ Կիլիկիայի
սահմանի վրայ: Կիլիկիայում Ատա-
ն, Անթիպի և Չիլիկուն տեղերը,
Փոքր-Հայաստանից դուրս, բուն Փո-
քր-Ասիայում, Անգորա քաղաքը:
Վերջապէս մի քանի ամենախոնարհ
տեղեր Ռուսաստանի նոր միացած
Ղարսի նահանգի մէջ, որոնք են
Ղարս, Կալաման, Օլաի և Պաթում:
Մեք գլխաւորապէս պիտի դիտուենք
Մեծ կամ Բարձր Հայաստանը: Ամ-
բողջ Հայաստանը շատ բարձր դիրք
ունի, շրջապատուած ամեն կողմից
սարբեր շղթաներով, որ և առիթ է
տուել մի գերմանացի նշանաւոր աշ-
խարհագիր անուանել Հայաստանը
«մի օգային սարոտ կղզի»: Բայց
ամենաբարձր դիրք ունի Մեծ-Հա-
յաստանը, որ իր երգրում քաղա-
քով կազմում է Հայաստանի միջին
կէտը: Մեծ կամ Բարձր Հայաս-
տանը, թուրքաց տէրութեան տակ
գտնուելով, բաժանուած է երեք վի-
լայէթների վրայ՝ Դիարբէքլի, Վանի,
և Երզնկայի վիլայէթների
վրայ: Երգրում կամ Կարին քա-
ղաքը, մինչև վերջին Ռուս-թիւրքաց
պատերազմին սկիզբը և վերջը եղել
է Թիւրքիայի Պարսկաստան և Գի-
սիայի արձագանք անցնող արաւելիս
ճանապարհի կենտրոն: Քարավանի

ճանապարհի միջին կէտը երգրում
էր կազմում, իսկ երկու ծայրական
կէտերը՝ Տրապիզոն և Բայազէթն
էին: Այդ էր պատճառը, որ արաւ-
ելիս այս ճանապարհը չը խափանե-
լու համար Անգլիան ամէն ջանքեր
գործ դրեց Բերլինի կոնգրէսի ժա-
մանակ որ, Բայազէթը յետ արու-
թութեան: Այդ կէտը շուտին գրեթէ
ուրիշ նշանակութիւն, բայց առե-
տրական հաղորդակցութեան կէտ
լինելուց: Այսպիսի մի կենտրոնում,
ինչպէս էր Երզնկայում, Կ. Պոլսից և
կող ապրանքը պատահում էր Պարս-
կաստանից անցնող անմաշկ, հում
բերքերի հետ: Այդտեղ թափվում
էին, նոյնպէս ամէն կողմերից, Հայ-
աստանի թէ բնական բերքերը, և թէ
գաւառացի Հայոց ազգաբնակչու-
թեան ձեռքերի վաստակը, աշխա-
տանքի Հայի և Հայուհւոյ արդիւնա-
գործութիւնները: Այսպէսով թէ
բնիկ և թէ օտարական հայ առեւտրա-
կաններ, նոյնպէս և պարսիկ, յոյն,
եբրեյն և Եւրոպայի կառնականներ
հալածուելով Երգրում մէջ, տալիս
էին այդ քաղաքին կենսւթ և առեւտ-
րական նշանակութիւն:

Անցնելով Հայաստանի բնական
հարստութիւնների նկարագրու-
թեան, ես կը սկսեմ հանքերից: Ամ-
բողջ Հայաստանը լի է հանքային ջր-
երով և հանքերով: Շատ տեղ մար-
դը միայն գուռակել կարող է որ
գետնի տակ պահուած են հարուստ
հանքեր, որովհետեւ ամեն քայլափո-
խում հոսում են առատութեամբ
հանքային ջրերը: Երգրում միջին-
վերջում հեռաւորութեամբ կան նախ-
թի առատ աղբիւրներ Հասան-Ղա-
լայի շուրջը: Նախքան շատ առատ
է երեւում և այդ նիւթը կարելի էր
հաւաքել հորերից, ինչպէս Բազու-
կի շրջակայքում, մշակել նրան և պատ-
րաստել նրանից նուրբ ֆոսֆորէն:
Բայց մշակողները չը կան, ոչ էրիկ
ժողովուրդը օգտվում է այն նիւ-
թից ամենանշապետական ձևով:
Բնակիչները լինելուով են հորերի
մէջ փայտաներով փաթաթված փայ-
տեր և երբ որ նախքան բաւական
ծծուել է փայտաների մէջ, տանում
են տուն և գործի մեծում այս ձևով
հաւաքած նախքան թէ վառելիքի և
թէ լուսաւորութեան համար: Նա-
խքան այդ նախապետական արդիւնա-
հանութեամբ պարպում են Հա-
սան-Ղալայի շուրջը գտնուած բո-
լոր գիւղերը, թէ քրիստոնէայ և թէ
մահմանական: Հասան-Ղալայի մօտ
գտնվում է և մի ծծմբային հանք:
Նոյն Հասան-Ղալայից ոչ հեռու դէ-
պի Նարիմանի կողմը գտնվում են
թաղված քարածուխի շատ ընդար-
ձակ պահեստներ: Երգրում մի շորս
կողմը գտնվում են անթիւ ծծմբա-
յին և երկաթային հանքային ջրեր,
որոնք համարվում են բժշկական
բնական միջոցներ, մանաւանդ կա-
նանց հիւանդութիւնների դէմ: Այդ
տեղերից են կը յիշեմ ամենաշա-
նաւորները՝ Իլիճա, Ալազաղ, Սըլը-
րը: Ղարսի նահանգում, որ պատե-
րազմից յետոյ միացած Ռուսաստա-
նին, գտնվում են նոյնպէս հանքեր
օրինակ Կազմանի մօտ կան հա-
րուստ աղահանքեր: Նոյն Կարմա-
նից ոչ հեռու մեծ քանակութեամբ
կայ մարմարի մի մի քարի տե-
սակ, որ գոյնզգոյն է լինում և գե-
տնից հանելու ժամանակ այնպէս փա-
փուկ է, որ նրան հեշտութեամբ
կարելի է դանակով կտրել, բայց օ-

ղի ազդեցութեանը ենթարկուելով
սաստիկ պնդանում է Օլաի կող-
մը գտնվում է մի տեսակ սև սաթ,
որի նմանը ասում են, աշխարհիս
ոչ մի տեղ չկայ: Այդ քարը իր ար-
տաքին տեսքով նման է «գիշերա-
սուած» ընտիր քարածուխի տեսակին,
բայց իր արտադրութիւններով բոլորովին
նման է սաթին և տեղացիներն էլ ան-
ուշաւում են այդ քարը քահուրար
որ թիւրքերէն սաթ է նշանակում:
Նորերում սկսեցին ուղարկութիւն
դարձնել և վանի նահանգում գրա-
նուած նախքան հարուստ աղբիւրնե-
րի վրա: Երգրում մի վիլայէթում,
Երզնկայից ոչ հեռու, Կամախ ան-
ուշաւում տեղի շրջակայքում կայ
մի աղահանք և նոյնպէս պատահում
են այդ տեղ քարածուխի հանքեր:
Կամախի մօտ գտնված Ժայռոտ սա-
րի մի կողմից բլրում է մի հանքա-
յին աղբիւր, իսկ նոյն սարի միւս
կողմից բլրում է մի հանքային աղ-
բիւր, որ ձևաւ ժամանակ տաք է
լինում, իսկ ամառ ժամանակ այն-
քան սառն, որ Ժայռից բլրելուն
պէս սառուց է կտրվում: Երգրու-
մից 70 վերջում Դերման ասված տեղի
մօտ նոյնպէս մի աղահանք կայ: Բայց
ամենահարուստ աղահանքերը գտ-
նվում են Մուշի կողմը: Շատերի
կարծիքով այդ հանքերը այնպիսի
հարուստ են, որ եթէ ամբողջ Ասի-
այի աղահանքերը օգտուէին, Մուշի
աղահանքերը բաւական կը լինէին
այն ամբողջ Ասիային և թէ Եւրո-
պային աղը հայթայթելու: Մուշը
Փոքր-Ասիայի կողմն է (Կուլայ): Այդ
հանքերից բլրում են աղի աղբիւր-
ներ, որոնք միանալով կազմում են
մի աղի գետակ, որ իր թանկագին
նիւթով, աղով, գոգաղբայէս ա-
պարդիւն կերպով է վազում, որով-
հետեւ բնիկներով Մուշաւոր-Հայ
գետի
մէջ, խառնվում է նրա ջրերի հետ և
վերջապէս անհետանում է Եփրատի
ջրերի մէջ: Մուշից անցնելով Բիթ-
լիս մէջ գտնում ենք նրա շրջակայ-
քում գտնելի մի հանք որ բնակիչ-
ներին դեղին ներկ է տալիս: Բիթ-
լիսի և Դիարբէքլիի գրեթէ կէս
ճանապարհի վրա քանի մի տարի
կայ որ գտնվեցաւ մի հարուստ պղն-
ձի հանք: Առհասարակ պղնձի
և երկաթի մաղաններ շատ բազմաթիւ
են Հայաստանի ամբողջ տարածու-
թեան վրա: Կը յիշեմ այս տեղ, օրի-
նակ, Եւքոկիայի կողմերը Անի մօտ
գտնուած պղնձի մաղանները: Եր-
կաթի և պղնձի առատ մաղանները,
թէ անմաշկ թողուած, երևում են
Յիւրբանի և Կիլիկիայի շրջակայքում,
որ տեղ և ասկու հին հանքերի հետ-
քեր են նկատվում: Հաւատացնում
են որ այդ երկրից (որ Երգրում մի
և Տրապիզոնի գրեթէ կէս ճանապար-
հի վրա է գտնվում և հին Սօփիքը
է), Իսրայէլացիների Սողոմոն Իմաս-
տուն թագաւորը ոռիկ էր բերել
տալիս, գործածելով այդ նիւթը Ե-
ւրոպացիների տաճարի շինութեան
զարդարանքների վրա: Արձաթի
ամենանշանաւոր հանքը գտնվում
է Գիւմրի-Սիւնիի անմաշկ տեղում,
Երգրում մի վիլայէթի սահմանում Ար-
ձաթի այդ հանքը տեղացիներից
շատ քիչ և ամենանախապետական
ձևով է մշակում:

Հայկուն քաղաքից ոչ հեռու երկա-
թի առատ հանքեր, որոնք մշակվում
են, որովհետեւ լեռնաբնակ հայ ժողո-
վուրդը այդ երկաթից իր համար
դէնքեր է պատրաստում: Նոյն տեղ
և մի արձաթի հանք կայ, որ անմա-
շակ է թողուած: Գաղաքի շորս կող-
մը կան բազմաթիւ հանքային, մա-
նաւանդ ծծմբային ջրեր, Անթապ-
քաղաքից ոչ հեռու գտնվում են սև
և սպիտակ մարմարի մի քանի
ներ: Սպիտակ մարմարի մի մեծ քա-
ն, շատ ընտիր է:

Հայաստանը հարուստ է այն
բուսականութեան կողմից, որ դար-
գանում է և պահպանվում է մար-
դու ձեռքով, բայց աղքատ է բնա-
կան բուսականութեան, անտառների
կողմից: Եթէ Հայաստանի մի քանի
տեղերում կան էլ հարուստ և իսկ
անտառներ, նրանից օգուտ քաղել,
ճանապարհների պահպանութեան
պատճառով գրեթէ անհնարին է:
Ամենահարուստ անտառներից մինը,
Սողոմոնի անտառը, անցել է պա-
տերազմից յետոյ Ռուսաստանի ձեռ-
քը: Այդ անտառը հայթայթում էր
թէ շինութեան և թէ վառելիքի
համար փայտ մտնող Երգրում մի վի-
լայէթին: Այժմ Երգրում մի թէ քրի-
ստոնէայ և թէ մահմանական ազգա-
բնակությունը մնացել է գրեթէ ա-
նոց վառելիքի և բնակիչները չեն
կարող նոյնպէս նոր շինութիւններ
կառուցանել և հինքը նորոգել:
Այս գրուութեան մէջ սարոտ և ցուրտ
Երգրում, որ շատ բարձր դիրք ու-
նի (8000 ոտնաչափ ծովի մակերե-
ւոյթից բարձր), գրկուած է մնացել
իր ամենանախապետ պիտոյթից,
փառելիքից և ասում են որ վիլայէ-
թի թէ քրիստոնէայ և թէ մահմա-
նական ազգաբնակությունը գաղ-
թելու է այդ պատճառով: Լսվում
է որ Երգրում մի վիլայէթի բնակիչ-
ներ լինողները հիմա միայ թրքաց
տէրութիւնը դիմեց մեր տէրու-
թեանը, խնդրելով թող տալ վի-
լայէթի բնակիչներին նշանակուած
պարձով օգտուել Սողոմոնի ան-
տառի փայտից: Ճշմարիտ է գիւ-
ղերի մէջ վառարանները յարմա-
րեցած են թաթարի գործածութեան,
որպէս վառելիքի, բայց քաղաքների
մէջ դա անհնարին է: Յոյց տալու հա-
մար թէ որչափ զգալի կերպով պայ-
տելու է փայտի պահպանութիւնը
այդ երկրում, ես կը յիշեմ այստեղ
որ այդ պատճառով արդիւնազոր-
ծութիւնը Հայաստանի այդ մասում
կանգ է առել: Օրինակ Երգրում մի
վիլայէթում գտնուած Շարանի
նոյնաբնակի սպիտակ գործարանը
ստիպուեցաւ փակուել փայտի պա-
կասութեան պատճառով: Իհարկէ
կարելի էր փայտի տեղ, որպէս վա-
ռելիք գործարանի նախքան մնացորդ-
ներ, ինչպէս ասում են Բազուկի մէջ,
որտեղ բոլորովին փայտ չկայ: Կամ
նոյնպէս քարածուխ, որի հարուստ
պահեստներ Հայաստանի ամեն քա-
յալովում կան, բայց թէ քարածու-
խի հանքերը և թէ նախքան աղբիւր-
ները իւրեւրեւր հանքերը գործը մի մար
գուռ օգտուել վեր, է, այդ դրա հա-
մար հարկաւոր է ընկերութիւններ
կազմել և հաստատել... Բայց կա-
նոյնք անարեւոյթ երկրակցութիւն-
ներ դոյրում են ունենալ թրքաց կա-
ռավարութեան կամայականութեան
տակ-չեմ կարծում: Նարիմանի
մօտ գտնվում է թէ և բաւական մեծ
տնտառ, բայց նա չունի յարմարու-

թիւն ճանապարհների կողմից դէպի
Երգրում: Անտառներ կան Երգրու-
մի վիլայէթի Կիսկիւն և Յիւրբի
դաւառում, Խոտորուրի Վերք
և Ջրանց գիւղերի շրջակայքում,
կան թուփերից բաղկացած անտառ-
ներ և ինչիսի կողմը, բայց բոլորն էլ
մուծ են առանց արդիւնաշահուե-
լու, դարձեալ յարակցութեան քիչ
շատ օրինաւոր ճանապարհների քա-
ցակացութեան պատճառով: Եր-
գրում և Երզնկայի մէջ տեղ գտն-
վող Գիլի կողմում կան մեծ քա-
նակութեամբ բնկայի ծառեր, որ-
տեղից կոծ (կուշկու) է ստացվում:
Այդ արդիւնքը օտարները վաճառա-
հանում են Հայաստանից: Կան ան-
տառներ նոյնպէս Թուրքում մի կողմ-
բում և վանի վիլայէթում: Բայց
թէ Երգրում մնացելու անելի եռան-
դոտ լինէին և հետեւին Հայերի հա-
շարան ուսման թեան, նրանք կա-
րող էին դարձանել իրանց երկրում
արուստական անտառներ, ինչպէս
վերջին ժամանակներում մէջ Հայերը
նորաբերդի կողմը բուսեցել են մի
հիւնալի ցանովի անտառ բարդի
ծառից: Այդ բանի մէջ Հայերը
յայտնվում են ասիական գերմանա-
ցիների: Արուստական կերպով ան-
տառների բուսեցելը նոր բան չէ ե-
րևում Հայերի մէջ: Երևում է որ
այդ գործը նոյնքան սովորական էր
հին Հայերի համար, որքան արուես-
տական ջրանցքներ անցկացնելը: Օ-
րինակ ժողովրդական աւանդութիւն
կայ, որ և Սողոմոնի անտառը ահագին
անտառը, որի մէջտեղ գտնվում է
գեւ. այժմ մի աւերակ հին եկեղեցի,
արուստական կերպով դարձացած
է եղել մի Հայոց թագաւորի հա-
մար: Վերջապէս Երգրում մի բնա-
կիչները կարող էին իրանց փայտը
ստանալ, եթէ ճանապարհներ լինե-
ին, Բայերդի և Տրապիզոնի մէջ
տեղ գտնուող հարուստ անտառնե-
րից, կամ Թրքաց տիրապետութեան
տակ մնացած Սարատանի մասից,
այն է Բիզէի կողմերի կուսական ան-
տառներից: Անտառի պակասութիւ-
նը, մանաւանդ, զգացվում է Ալաշ-
կերտի դաշտավայրի վրա, որ թէ և
հարուստ է սև, բերրի հողով և առատ
արոսներով, բայց կատարելապէս
զուրկ է անտառներից: Որ և է հա-
տատուութեան փայտի գտնելը Ալաշ-
կերտի բնակիչներից մինի տանը,
գրեթէ չկապը է համարվում այս
դաշտավայրի դիւղերի մէջ որտեղ
վառելիք է ախարը, մասամբ էլ
մի տեսակ եղէգն որ թիւրքերէն
անուանում են Եղէգնի պոչ (սղըն
գուլուրի): Այս փայտանման հատ
և ամուր եղէգն, որ գործ է ած-
վում աթարի հետ միասին, որպէս
նրան վառողնիւթ, գործ է ածվում,
նոյնպէս, հողի կտուրների տակ
գարնելու համար, իբրեւ առաստաղ:
Այդ պատճառով կտուրները լինում
են այնչափ թոյլ, որ ամենին չէ
կարելի նրանց վրա ման գալ: Հա-
յերը, որոնք, ինչպէս ամէն տեղ,
մի տարնակ կամ հաստատարնակ են,
իրանց տների պատերը Ալաշկերտի
դաշտավայրում էլ շինում են քա-
րից և հողից, իսկ քիւրդերը, որոնք
ստանդական և վրանարնակ կենսւթ
են վարում, իրանց բոլոր բնակա-
րանների պատերը շինում են այդ ե-
ղէգնից, ուրեմն նրանց տունը ոչ
այլ ինչ է, եթէ ոչ մի մեծ վան-
դակ եղէգնից գործուած: Ալաշ-
կերտը չէ կարող օգտվել ոչ Սողա-
նուրի, ոչ էլ վանի նահանգի ան-
տառներից, հեռաւորութեան և ճա-
նապարհների բացակայութեան պատ-
ճառով:

(Շարունակելի)

ԱՐԱՐԱՏ

Կը հրատարակուի երկու շաբաթը անգամ մը, Հինգշաբթի օրեր:

Խմբագիր եւ Տէր,
ՓԱՆԴԱԿ ՄԱՏԹԵՈՍ ԱՅՎԱՏԵԱՆ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ
(Բաժնի տուրքէ ազատ)

Միացեալ Նահանգաց համար,
Մէկ տարեկան 2 տուրք,
Կէս 1

Օտար երկրներու համար,
Մէկ տարեկան 12 շիլլին,
Կէս 6

Բաժանորդագիրք կանխիկ վճարել են. և կրնան յղուիլ փոխանահանուան հետ բուն անուններն ալ խմբագրութեան գրեցնել, չէ թէ հրատարակութեան, այլ փոխանահանութեան համար:

Թղթակիցներէ կրնան իւրեանց ստանձնած հրապարակային անուան հետ բուն անուններն ալ խմբագրութեան գրեցնել, չէ թէ հրատարակութեան, այլ փոխանահանութեան համար:

Ձի հրատարակութեան գրութիւնք ետ չեն դարձուիր որ և է պարագայի ներքեւ:

Ուղղել ամեն գրութիւնք առ

THE ARARAD,
No. 100 Centre Street,
NEW YORK.

Նիւ Իր-ԵՕՐԲ, ԵՇ. ԱՊՐԻԼ 9. 1891.

«Եթէ ժողովուրդը հօտ մը է, րազիրներն ալ այն հօտին պահպան չունենն են» կ'ըսեն. վերջուր պահպան չունենն, այդ հօտը դալերուն յափշտակութեան մասնակցիր: «Արարատ»

«Բոլորովին անոյս բան է ակնկալել որ Դուռը երբեք քաղաքակրթեան արագաձուլութեան մը պարտականութիւններն պիտի կատարէ Թրքական կայսրութեան այդ (Փոքր Ասիոյ) մասանց մէջ. Թրքական վարչութիւնը թէ պիտի և թէ տկար է, և այդպէս պիտի ըլլայ մինչև որ վերջը գայ: «Արարատ» Դուռը: Ի Միտիլին Մանչեսթըրի, Նոյ. 23, 90:

ԳՐՈՐԵ ԵՒ ԳՐՈՐԵՆԴԻ:

Այս գրութիւնը ներքեւ արհեստաւորաց մասին մեր ըսելիքը տեղւոյ անձկութեան պատճառաւ յովորդ թուոյն թողել պարտաւորած եմք:

ԿՍՐԺ ԽՕՍԳՈՎ.

Մարտ 23 թուականաւ թղթակից մը գրեց.

«Հաճեցէ՛ք զրկել ԱՐԱՐԱՏԻ իմ հասցէի կէս տարուան համար. և եթէ սիրեմ զանի պիտի շարունակեմ ամբողջ տարին առնել»

Սոյն հայրենակցին ԱՐԱՐԱՏԻ վերջնագոյն թուրքէն մէյմէկ օրինակ զրկուեցան. և Ապրիլ 6 թուականաւ հետեւեալ պատասխանն մեզ հասաւ:

«Ձեր ինձ զրկած թերթերն ընդունեցի և զանոնք խիստ շատ սիրեցի. Կը խնդրեմ մէկ տարուան համար բաժանորդ գրեցէ՛ք զիս, և շարունակեցէ՛ք ԱՐԱՐԱՏԻ զրկել. Յաջորդ բաժնով տարեկան բաժանորդագիրն պիտի ընդունիք»

Իրողութիւնք իրենց համար կը խօսին:

«ԹԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՄԱՂԻԹԵՄ ԵՒ ՀԻՆ ԱՐԱՐԱՏԻՆ» կը գրէ Հայ-Ամերիկեան թղթակից մը «որ ծագեալ է և կ'ընդարձակի. բնաւ չեմ տարակուսիր թէ այս թերթն միշտ պիտի պիւր ըլլայ» ինչպէս որ եղած է ամենուն, մինչ չի ծառայեր մէկուն կամ մէկքանի անձանց կամաց. ո՛չ ալ կրճատեալ գծաւորութեանց կամ տարբերութեանց տեղի կուտայ իւր պատուական սիւնակաց մէջ:

Իրաւունք ունիք, սիրելի Տէ՛ր, և շատ ուրախ եմք որ ԱՐԱՐԱՏԻ ըստ իւր արժանեաց կը դատէք անկեղծօրէն:

Քանի որ մեր սկզբունքն բաւական եղած են մեր գոյնն յատակօրէն յայտնելու, ո՛ւմ պարտիմք ծառայել բայց թէ ժողովրդեան

ՀԱՅ ՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԵՋ
ԵՒ
Բ. ԳՐՈՐԻ:

Կատանդնու պոյսէն եկած նորանոր լուրեր դարձեալ կը հաւաստեն թէ Դուռը ստիպելու վրայ է գլխաւորաբար անհաշտութեան պատճառով Հայ վարժարաններու մէջ, իսկ Պատրիարքը Սըրբեան Սրբազան իւր այդ բանն ընելու անձեռնհաս ըլլալն յայտարարած է:

Եթէ Հայ ազգը իւր ներկայ ցաւոց մէջ միտնարութեան փոքր ինչ նշոյ մը կը տեսնէ, այն ալ սա է որ ժամանակ առ ժամանակ թուրք կառավարութիւնն չի մոռնար իւր բազումաշխատանք պատրաստած խաբէական հնարից հետ մեկտեղ այն պիտի ապացոյցներ ալ տալ իւր նենգութեան որով ամէնէն պարզամիտ ժողովուրդն իսկ կրնայ տեսնել թէ այդպիսի սուտ խոստմանց և ամենատկար խորագիր-տուրքամբ պատրաստուած դարաններու մէջ ինչպիսի ներքի չըլլալէ ի զատ մահացու մեղք է:

Սյոթ խոստանալ թէ շանք պիտի ըլլայ Հայն երջանիկ ընելու և նորա ամէն անցեալ և ներկայ վշտերն մոռցնելու, և վաղն ալ երեւի նորա ամենէն նուիրական իրաւանց վրայ բունանայն ինչ կրնայ նկատուիլ բայց թէ ամեն նախորդելի վարչական տկարամտութիւնն մը:

Ինչպէ՛ս կրնայ ակնկալուիլ թէ իւր գերիշխանութեան ներքեւ ալ և այլ ցեղեր իւր թէ կառավարել ցանկացող պետութիւն մը երբեք պիտի կարենայ որ և է աստիճանի գոհութիւն պատճառել իւր հպատակաց, երբ նա հինգ հարիւր տարուան փորձառութեամբ չէ կարողացած ըմբռնել թէ տէրութեան անդորրութիւնը և հպատակ ժողովրդեան մը երջանկութիւնն ճիշդ ինչ բաներու մէջ կը կայանան:

Իւր ապրելու աղատութիւնն պահանջող և ասպատակաց և յուր պաշտօնէն զերծելու ուզող ժողովրդեան մը իւր պատմութիւնը ուսանելն արգելիլ փորձելն ամենազորաւոր ապացոյց մը տալ չէ. թէ այդ կառավարութիւնը երբեք ընդմիտեալ չէ իւր հպատա-

կաց բուն ցաւերը դարմանելու այլ ընդհանրապէս մոտեցիլ է զանոնք կարելի եղածին չափ միայն մէջ պահելու որպէս զի դժբա անկարող գտնուին դիտնալ բարւոյն և չարին տարբերութիւնը:

Եթէ Թուրք կառավարութիւնն համոզուած է թէ Հայոց պատմութիւնն է որ իւր Հայ հպատակաց զգացումներն այն աստիճան կը մշակէ որով կը կարողանան բարւոյ վարչութիւն մը վտտիտարէն զատել և լաւագոյնին բաղձալ առաւել դիւրին չի պիտի ըլլայ իրեն համար այդ գիտութիւնն թուրք վարժարաններու մէջ ևս ներմուծել, քանի որ չնորհէն աւելի դիւրին է քան թէ արգելելն, և այն ատեն թէ իւր ժողովրդեան մէջ խտրութիւն մտած չըլլար և թէ այդ գիտութիւնն եկած բարիքը ամենուն հաւասար եկած կըլլայ:

Հայերն իրենց վարժարանաց մէջ Հայոց պատմութեան հետ կուսուցանէն նաև Թրքաց և ուրիշ ազգերու պատմութիւնները և մասնաւոր առարկութիւն մը չունին եթէ Թուրքերն ալ իրենց պէս ընեն:

ԻՏՍԻՒՄ ԵՒ ԸՆԲԼ ՍԱՄ

Նոր Օրէանի դէպքերին առթիւ ակնկալուածէն աւելի գծաւորութիւն ծագած է Խալիլի կառավարութեան այս հանրապետութեան միջև. Ուսման թիւ կը պահանջէ որ Նոր Օրէանի մէջ ինչ եղած ոճը դրոշմներու ընտանեաց տուգանք վճարուի, և այս կառավարութիւնն երաշխաւորէ ուրիշ Խալիլական հպատակաց կնանքերը որպէս զի դժբա ապագային մէջ առաւել ևս վստահութիւն ունենան այս երկրին մէջ ապրելու:

Մեր խելօք և պարզուկ եղբայր Սամուէլն ալ ամենայն պարզիւնութեամբ կը պնդէ թէ, երկրին դուրսէն չի ներքի որ իւր քաղաքացիներուն տուած պաշտպանութեան աւելի պաշտպանութիւն մը տայ օտար հպատակաց:

Սյս բանիս Խալիլա չի համոզուիր, և իւր ներկայացուցիչ Սինթոն Ռուտինի միջոցաւ կրակ և բոց խօսքեր, սպառնալիք ևս, կը թափէ մեր Ուսման թիւն կառավարութեան վրայ:

Հետաքրքրականն սա է որ Խալիլա իւր Դեմոկրատիկ յետ կոչելու, և ջրին այս կողմը դաշտաւորներ զրկելու պէս ցոյցներ կընէ հաւատարմով որ այդպիսի ցոյցներ կրնան զՄիացեալ Նահանգներ իրենց երկաթեայ հաստատամտութեան մաղի չափ շեղեցնել:

Ո՛վ երանելի Պետութիւն, քեզի պէս տասը զօրութիւն կընող Անգլիոյ ազգն ալ Պէ՛րլինիայի ժողով նկատմամբ ծագած մէ՛ծին առթիւ, զայրանալու պէս բաներ եղաւ. բայց ատենց այս ազգին վրայ մաղի չափ աղբեցութիւն չընեն տեսնելով խոհեմութիւն սեպեց ամբողջ գործը այս կառավարութեան լրջախոհութեան թուրք:

Ձեզ ալ նպաստաւոր կըլլայ թէ արիւնիք տաքցնելով ունեցած փոքր ինչ զօրութիւններ ունայն տեղը եթէ չսպառէք. մեք ջուրն այս կողմը շատ այնչափ փութալու մարդիկ չեմք որ մարդկային իրաւանց ինչ ըլլալը չգիտնամք. իսկ եթէ շատ փափաք ունիք որ մէկուն հետ կուռի բռնուիք, Ձեզ առաւել չափակից մէկն ընտրեցէ՛ք. Թուրքիա գործինակ:

ՀԱՅ ԵՐ
Ի ՖԻԼԱՏԵԼՖԻՒՆ:

Ամայս 5 ինչիւրակէ օր ամայս առաջին կիւրակէն ըլլալով տեղեկացած էինք թէ նոյն տեղի Հայկական Միութիւնն ի ժողով կը գումարի, և մեր բարեկամներէն ոմանք փախեցած էին մեր այցելութիւնն սոյն նստին: Ուստի առաւօտուն քաղաքէն մենելով կէս առուր մօտ հասանք ի Ֆիլատէլֆիա ուր միացանք մեր բարեկամաց հետ որք մեզ կ'ակնկալէին: Ժամը մէկ ու կէսին որդուած ըլլալով Միութեան նիստը, դիմեցինք ի Մօրնիկ Սթար Հօլ կէս առուր ճաշէ ետք ընկերացութեամբ Տիար Ե. Օգանեանի և Կ. Էֆէնտեանի, և նաև Տիար Ս. Արսէնի որ Նիւ-Եօրքէն մեզ ընկերանալու հաճոյքն չնորհած էր:

Միութեան սոյն նստին հրաւիրուած էր Բրոքի Վիլքեր Պ. Հօլ. որ է ուսուցիչ կենսական գիտութեան, ի ձեւարանին Կենսական Գիտութեանց Ֆիլատէլֆիոյ ևս: Ատենական սովորական գործողութեանց կատարմանէն ետև ատենապետ Տ. Կ. Էֆէնտեան հրաւիրեց թերթիս խմբագիրն մի քանի խօսք ուղղել առ ժողովը: ԱՐԱՐԱՏԻ խմբագիրն նիւթնեղաւ «Հայ ընկերականութիւն և անհատական պարտիք առ ազգն» որոյ վրա խօսեցաւ իբր կէս ժամ, ի լուրջ ունեցողութիւններով: Բացառեց թէ ինչո՞ւ համար մեր իւրաքանչիւրն վրայ մասնաւոր պահանջ ունէր մեր ազգն, և թէ օտարաբան ազգայինք ինչ ընթացք պէտք էին ունէր իրենց առ ազգութիւնն ունեցած պարտականութիւններն կարենալ գէթ մասամբ իւրեք լեցնելու համար:

Տ. Ե. Ազանեան ներկայացուց ժողովին գրոթֆ. Վիլքեր Պ. Հօլ որ անգլիարէն լեզուաւ ընտիր ատենաբանութիւն մը ըրաւ թիւրքերով գործածական միջոցներով Ամերիկեան ազգայինք կրնան նպաստել Հայկական դատին. և փաստաբան լիւրջ Սինթոնեան ժողովուրդը կրնան խիստ արդիւնաւորապէս նպաստել Հայոց գործին «բայց» ըսաւ բազմաձայն ատենախօսն «պարտ է պատրաստել հասարակարձ իբրէն այս բանիս համար և պարտ է նոցա առջև բերել կարելի եղածին չափ յաճախ» Հայկական իրաց բուն վիճակն. ծանուցէ՛ք աշխարհի թէ ինչ են ձեր արժանիքը և այն ատեն աշխարհ ալ ձեր արժանիքը պիտի ճանչնայ» Լրագրութեան վրայ խօսելով, Բրոքի Հօլ խիստ քաջալերական գովեստով խօսեցաւ ԱՐԱՐԱՏԻ նկատմամբ, որ կերելի թէ հարկ եղած մանրամասնութիւններն իւր հայագիր բարեկամներէն տեղեկացած էր: Անկախ մամուլն է ժողովրդեան ձայնը, և ազատ լրագիր մը կրնայ կատարել ժողովրդեան համար ինչ որ ժողովուրդն այնչափ կարող պիտի ըլլար իրեն համար կատարելու: Ուրեմն, պահեցէ՛ք ձեր ձայնը. քաջալերեցէ՛ք ձեր թերթը. զի առանց դուրա կորուսած կըլլաք ձեր միտնեան կապը, որ շատ կարեւոր է ցրուեալ ժողովրդեան մը համար:

Բրոքի. Հօլի պատասխանեցին Տիար Ե. Բաղդասարեան և Միսալեան, նոյնպէս և թերթիս խմբագիրն: Տ. Գառնիկ ֆէրմանեան խիստ ընտիր ատենախօսութիւն մը ըրաւ Հայերէն լեզուաւ գովելով ժողովրդեան իմաստուն և փորձառու առաջնորդաց գործը. և բացատրելով թէ Հայկական գործն ինչպիսի գործիչներու պէտք ունի: Ուրիշ ազգայնոց կողմանէ ալ կարճ և հրահանգիչ խօսքեր ըլլալէ ետև ժողովը իւր սովորական խնդիրներով զբաղեցաւ ժամն հնգիս փակեցաւ:

Թէպէտ մեր դիտաւորութիւնն սոյն երեկոյին վերադառնալ էր ի նիւ Եօրք, բայց Տիար Օգանեան և Բրոքի. Հօլ տեղեկացուցին մեզ թէ

Մեծայարգ Ալպերդ. Հ. Լըվ, Նախագահ Տիեզերական խաղաղութեան Միութիւն շատ ուրախ պիտի ըլլայ եթէ այցելեմք յիշեալ Միութեան սովորական նստին որ տեղի պիտի ունենար յաջորդ երեկոյին որ էր երկուշաբթի, Ար. Գեորգ սրահին մէջ: Ուստի նկատելով որ յիշեալ պատկառելի Միութիւնն Հայկական արդար դատն ալ իւր ուշադրութեան առարկայն ըրած էր վերջերս, «Արարատ» ի խմբագիրն պատշաճ դատեց պատասխանել Տիեզերական խաղաղութեան Միութեան փափաքանց:

Ուստի հետեւեալ երկուշաբթի երեկոյին ժամը եօթն ու կէսին դիմեցինք ի Ս. Գեորգ սրահն ընկերացութեամբ Տիար Ե. Օգանեանի, ուր ի ժողով գումարուած էին անգամը Գործ. ժողովը և Պրնյը. Համբարձուեան և Միսալեան որք անդամ էին սոյն Միութեան: Տիեզերական խաղաղութեան Միութեան Գործ. ժողովը սոյն նիստը իւր սովորական օրակարգով զբաղեցաւ, որոյ մէջ զլրաւոր տեղ կը բռնէին, Ամերիկեան Հնդկաց և Միացեալ Նահանգաց կառավարութեան միջև վերջերս տեղի ունեցած պատերազմն և նորա յաջորդած հաշտութիւնը որոյ մէջ զլրաւոր դեր ունեցած էր այս Միութիւնը, նոր Օրէանի դէպքին առթիւ. Խալիլի և այս կառավարութեանց մէջ ծագած գծաւորութիւնն: Հայկական խնդիրն ևս: Մեծայարգ Նախագահն գովեստով ներկայացուց ժողովին «Արարատ» ի խմբագիրն և հրաւիրեց զնա խօսիլ մի քանի խօսք Հայկական իրաց ներկայ վիճակին վրայ: Ահաւասիկ մեր կարճ ատենախօսութեան թարգմանութիւնը:

«Ինձ պարտ կըզամ խորին շնորհակալութիւն յայտնել, Տիար Նախագահ, տիկնայք և պարոնայք, որ պատեհութիւնն կը տրուի ինձ մի քանի խօսք խօսել այս երեկոյ, պատկառելի տառն Հայկական խաղաղութեան խաղաղութեան նկատմամբ: Փոքր Ասիոյ Հայաստան անուշով ճանչցուած դաւառաց մէջ տեղի ունեցած սրտալուրդիչ հարստահարութեանց և անմարդկային վայրագութեանց լուրեր ամէն օր ի լոյս բերուելու վրայ են Եւրոպական անկախ մամուլի կողմանէ և իմ կողմանէ քիչ յաւելուած ներքեւ կը կարօտին իրաց ամենադուրի վիճակն ձեր աչաց առջև ուրուազեւելու համար: Բայց եղածներն կրնամ ամփոփելով ըսել թէ խելով Հայուն վիճակը չէ թէ միայն քաղաքակրթեալ աշխարհի կարեկցութեան» այլ զայրոյթին և գործնական միջամտութեան առարկայ ըլլալու չափ սրտամոկիկ է, միայն թէ այդ աշխարհը առաւել ևս ի մօտոյ գիտութեան կը կարօտի անպաշտպան Հայուն կրած տառապանաց և թրքական վարչութիւն կողմէն անցնող նկատմամբ: Հայն հինգ դարերէ ի վեր աղաղակ բարձած է, աղաչած է, պաղատած է, ողբացած է իւր վրայ տրորող կառավարութեան, զապելու այն Բիւրա, Ձեքքէս և այլն կոչուած թափառիկ ցեղերը որք լուրանց մէջ կապրին և որք ամէն պատեհութիւն ձեռքէ չեն փախցնէր յարձակելու անգէն գիւղացւոց վրայ և կողպուածքներն, տանելու ամէն ստացուածքներն, տանելու անոնց ապրուստի միակ միջոցն եղող արնաւները, առեւանգելու նոցա աղլուկները և ջարդելու նոցա մանուկները: Ի դուր ջանացած են այս չարիքը բառնալ հաշտական և հաւատարմական միջոցներով: Վերջին Ռուսո—Թրքական պատերազմին ժամանակ պարտ զգացին իրենց ողբալի վիճակն մեծ տերութեանց ներկայացնել, և այսպէս եղաւ երջանկայիշատակ Ներսէս Պատրիարքի առ Պէրլինի վեհաժողովն յղած պատուիրակներու միջոցաւ: Հայ ազգն իրաւամբ ակնկալեց որ Արեւելեան Գրիստոնէից բարօրութիւնն ի սրտին

ունեցող Եւրոպայ իրենց վիճակն ալ նկատողութեան առնելով գէթ պիտի ստիպէ զԹուրք կառավարութիւնըն Հայաստանի մէջ հիմնական բարենորոգումներ մտցնելու:

Բայց այժմու իրաց վիճակն ցոյց կուտայ թէ մինչև իսկ այն դոյզն խոստումն իսկ որ եղաւ այդ ժողովին մէջ բոլորովին մեռեալ տառ մը մնացած է և պիտի մնայ այս ընթացքով: Հայերն այժմ կըզան թէ պէտք է իրենց կեանքն պատիւն և ինչքն ապահովուի, և հաստատամտութիւն որոշած են ամէն միջոյի դործ դնել այս բանն ձեռք ձգելու համար: Եթէ Եւրոպայ շարունակէ անփոյթ գտնուիլ առ Հայս եղած խոստումներն իրականցնել տալու, մեծ վախ կայ որ այս ազգը յուսահատական միջոցներու դիմէ, որու նշանները արդէն տեսնուիլ սկսած են: Աւելորդ է ըսել որ այս միջոցն Հայաստանի մէջ ծագած խռովութիւնն մը չէ թէ միայն Արեւելեան խնդիրը վերստին կը յարուցանէ, այլ շարժանքացալ չեմ ըլլար եթէ ըսեմ թէ բոլոր Եւրոպայի խաղաղութեան վրէժովման սկզբնական ճառն կրնայ լինիլ Այս պատկառելի մարմինը որ իւր բարի ջանքը միշտ ի գործ կը դնէ կարելի եղածին չտի աշխարհի խաղաղութիւնն անփոյթով պահելու, յուսով եմ որ ամէն պատեհութիւն չի պիտի փնտցնէ տպաւորելու Ամերիկեան և Եւրոպեան ժողովրդեան վրայ թէ Հայն պարտ է ստանայ իւր պահանջը: այդ է խաղաղութեամբ ապրելու իրաւունքը, և ամէն պատեհ առթիւ յայտնել Դաշնակից Տէրութեանց, Ամերիկեան ժողովրդեան այս բանիս նկատմամբ ունեցած զօրաւոր զգացումը:

Մեր խօսքն վերջանալէ ետեւ նախագահ լըվ հարցոց թէ արդեօք իրա՞ն էր լրագրաց տուած այն լուրը թէ Թրքական կառավարութիւնը կը ջանայ արգելել Հայոց պատմութեան ուսուցումը Հայ վարժարաններու մէջ: Սորա պատասխանուեցաւ թէ այո՛, էր, և այդ բանն մինչև հիմայ Հայոց Պատրիարքարանի կրկնակի բողոքանաց առարկայն եղած էր: Եւ, լուսածին նայելով, չէ թէ միայն Հայոց պատմութեան ուսուցումն արգելուած՝ այլ մինչև իսկ եկեղեցական ազդեցութեան մէջէն Հայ, Հայաստան բառերը և Հայ Թագաւորաց անուններն հանուիլ հրամայուած է: Ժողովն մեծ ուշադրութեամբ ունկն դրաւ այս ամէն խօսքերուն և Մեծայարգ նախագահն յանուն միութեան վստահացուց թէ պիտի շարունակէ Հայոց արդար դատն իւր ուշադրութեան առարկայներէն մին ընել, և ամէն կարելի միջոց ի գործ դնել առանց արիւնյայեղութեան նոցա իրաւունքը իրենց արժուելու համար:

Տիար Օղանեան յայտարարեց նախագահին մեր առ Միութիւնն անդամակցելու փափաքն: որու վերայ առանց ձեւակերպութեան ժողովոյն ընդհանուր հաւանութեամբը անգամ ընտրուեցաւ թերթիս խմբագիրն, ինչպէս նաև Տիար Համբարձումեան:

Թեո աւարտման ժողովոյ նախագահ լըվ փափաք յայտնեց որ կարելի եղածին չափ յաճախ ներկայ գտնուիլը Միութեան ամսօրեայ նստերուն, և ԱրԱՐԱՏի խմբագիրն ալ խոստացաւ այդպէս ընել:

Նաև կը փութամը այս տեղ յիշել որ Բիւրմէյքըրի խմբագիրներէն Բրօքֆ. Վիգթըր Պ. Հօլ Բարութիւնն ունեցաւ ինչ ինչ յանձնարարութիւններ տալ մեզ առ այլևայլ անձինս ի Նիւու-Եօրք, որպէս զի կարողանամը նոցա օժանդակութեամբ Հայկական գործն ընդհանրացնել Նիւու Եօրքէ քաղաքացոց մէջ ևս:

ՀԱՅԵՐ

Ի Գ. Ա. Լ. Ի Ֆ. Օ. Ր. Ն. Ա.:

Յրէգնօ 23 Մարտ, 1891.

Սմարգիր Տէր:

Լսեցի որ Հայ Գաղթականաց վիճակին բարեօգտման համար խորհուրդ եղած և որոշուած է որ 200ի չափ հայեր զրկուին ի Յրէգնօ, կարծեմ փետր. 12 թիւ. Արարատիդ մէջ տեսնուած Յրէգնօն Լուրեր վերնագրով, նամակներն թելադրած ըլլան այս բանս:

Հայերուն ձեռք գտնուած երկիրներն այնչափ արժէք չունին, և գրեթէ արժէքին կէս մասն ալ տակաւին պարտական են և դրամատան վարձք կուտան:

Թայտնեմք հիմայ Յրէգնօյի աշխատութիւնը. նախ՝ անգլիերէն ըլլաւ կըսեն, որ բրիտան (փիլիպ) չի հասկցուի. հերկել, փորել, այգի տնկել, կամ պուտամա բնել, խաղող կտրել, և չամիչ չորնել. ասոնք բոլոր պիտի ըլլայ 100 էն մինչ 130, 40, 50 աստիճան արեգակին դէմ, ժամը վեց ու կէսն կամ եօթնէ մինչև իրիկուսն ժամը վեց, գրեթէ խաղողին ժամանակներն է. էք կամ չորս ամիս մէկ ու կէս տալեւ օրական և քանի մը ամիս ալ մէկ տօլար օրականով, իսկ մնացեալ գրեթէ չորս հինգ ամիսը անգործութեամբ. ուստի թէ հաշուէք տարին օրական 50 սէնթի չի գար: Յրէգնօյի մէջ ամէն բան Նիւ Եօրքէն աւելի սուղ է. ուստի կրնաք խորհիլ թէ ո՞ր աստիճանի ցած կերպով ապրելու է մարդ մի որ այս առատ շահէն ըստակ ալ աւելցունէ և յոյն ունենայ ապագային մէջ հողի մը տէր ըլլալու. ասոր ալ թերեւ կարող են պատասխանել յիշեալ ազգայններն բայց պէտք է գիտնան որ քիչ շատ հողի տէր Հայերն գրեթէ իրենց երկրին մեծ մասը իրենք կը մշակեն անձամբ, իսկ մեծ վիճակներու տէր Ամերիկացիք մեծաւ մասամբ Զինացիներ կը գործածեն, որք թէ գործերը գիտեն և թէ աժօրան օրականով կը խախտեն: Ահա այս է Յրէգնօյի վիճակն. եթէ ընկերութիւնը կարող է ընդարձակ նրկիր մը առնել, և գալիք Հայոց մշակելու տալ համարիտ եղբայրասիրական ոգով, այն ատեն կը հաւատամ որ եթէ դառն քրտինք ալ թարեւ գտնէ ապագայ մի կրնան սպասել. եթէ ոչ (հաւատով խոստովանիմ) որ գալիքներն շատ պիտի գլխան և մինչև 25 սէնթի օրականով աշխատութիւն պիտի փնտռեն:

Թ. Գ.

Գ. Օ. Լ. Օ. Պ. Ե. Ա. Ն.

ԱՇԽԱՐՀԱՆԻՆԻՍ

Ի 2ԻՊԱԿԻՍ:

Գաղղիոյ Հանրապետութիւնն եղած է նախագահ Հարիսընի Զիգալիսի Աշխարհահանգէսին մասնակցելու համար ամէն ազգաց զրկած հրաւերին հաւանողներուն առաջինն:

Միջկական լճեկերաց վրայ ցուցահանգէսի չէնքեր կառուցանելն այժմ բոլորովին մեկզի թողուած է, և Աշխարհահանգէսի գրեթէ ամբողջ չէնքերը ծածըն Բարբի մէջ պիտի կառուցուին:

Ճաքսըն Բարբի մէջ կառուցուելիք չէնքերուն մէջ նշանաւոր պիտի ըլլայ ամենամեծ նուազածութեան սրահ մը որու մէջ վերին աստիճանի նուազածութիւնը պիտի կատարուին: Կարգադիր յանկախութեամբ աշխարհիս պատմութեան մէջ նմանը տեսնուածէն աւելի թուով նուազածութեան խմբակներ կայթայթէ այն սրահին համար: Ռիպլինթայն և ուրիշ մեծ երաժշտագէտներ պիտի հրաւիրուին ներկայ գտնուիլ և ինքնիրեն ինքնակազմ անձամբ եղանակաց նուազումն անձամբ վարել:

Մի ուրիշ սքանչազման առարկայ ըլլաւ կը խոստանայ մեծ Զորդաւորը: Ապակիէ և երկաթէ կազմեալ բոլորածեւ շէնք մը պիտի ըլլայ 250 ոտնաչափ տրամագծով և 250 ոտնաչափ բարձրութեամբ ընդարձակ կամարով մը, որու վրայ պիտի ըլլան ջուր և լոյս. և կամարին գագաթին լուսախառն ջրոյ հեղի մը գլխի վար պիտի հեղու:

Գաղղիա չէ թէ միայն առականավարութիւնն եղած է նախագահ Հարիսընը զրկած հրաւերն ընդունելու այլ իւր առևտրական նախարարին նախագահութեամբ ամեն վաճառականութեան, ձեռակերտից, գիտութեանց և արհեստից ներկայացուցիչներէ բաղկացեալ յանձնախումբ մը ևս ընտրած է: Սոյն Ս. Խարհահանգէսին ըստ համար:

Թուրքիոյ կառավարութեան Թէվֆիք Պէյի միջոցաւ ընելիք ցոյցերու մասին ինչ ինչ մանրամասնութիւն հասած են: Կըսուի թէ նորա ցոյցը մեծաւ մասամբ պիտի բաղկանայ էլպիսէ-ի աթիքա, կամ հին Թրքական զգեստներու հաւաքածոյ: Պիտի ներկայացուին Մահմետական կրօնականք, Պաշտօնեայք Թիւրք բանակին, պալատան դռնապահ պարտեզպան, բժիշկ, պահակ, ծովապետ, Եպարքոս ևն: Այս ցոյցն շատ աշխատութեամբ և ծախիւք պիտի արդիւնաւորի:

Ա. Յ. Լ. Ե. Բ. Ա. Բ. Բ.

Վերջի դարուս մէջ տարեկան առհաւասար իբր 2000 տեսակ ձծիներ գտնուած են:

Արաբական տարին լուսնային է, և եռետուն և երկու տարուան մէջ իւրաքանչիւր ամիս տարւոյն ամէն եղանակէն անցած կըլլայ:

Մէկ միլիոն աօլար ոսկի դրամին կը կոչէ 3,685 բառուտ. արհաթ դրամն 38,920: Գրաւուտ:

Անգլիական դրօշը աշխարհիս ժողովրդեան մէջ վեցերորդին, և բնակելի մասանց մակերևոյթին մէջ՝ ութերորդին վրայ կը ծածանի: Բիւլայի ծառ աշտարակը 185 ոտք բարձր է, և եթէ գագաթի մօտ դուրս ցցուած եղբրը միատեղ հաշուի 15 ոտք 8 մաս իւր ուղղահայեացէն դուրս է: Թատակի պատերն 15 ոտք խիտ են:

Միացեալ Նահանգաց մէջ մարդ գլուխ տարեկան 175 բառուտ միս կ'ապառի: Մեծն Բրիտանիոյ մէջ՝ 100 բառուտէն քիչ մը աւելի, մինչդեռ շատ մը ուրիշ քաղաքակրթեալ երկիրներու մէջ առհաւասար 80 բառուտէն աւելի չ'ապառի:

Հետաքրքրական հաշուողութիւն մը ըրած է, մարդու մը կենաց 70 տարիներուն մէջ սպառած ուտելեան նկատմամբ, Գաղղիայի գիտնական Մ. Սոյեյէ որ այժմ Լօնտընի Րիֆօրմ գլուխ գլուխն կը գտնուի: Ի մէջ այլոց, Պ. Սոյեյէ կըսէ թէ եթէ անասուն տարեկան առ հասարակ կերակրեալ մը սպառած կըլլայ 30 եգ, 200 ոչխար, 1000 հորթ, 200 գառն, 50 խոզ 2,20 վառեակ, 1000 զանազան ձուկեր, 34,000 ոտքէ, 5,475 բառուտ բանջարեղէնք, 243 բառուտ կարագ, 10,000 հաւիկ և չորս Թօնօ հաց բաց առեալ ոչ սակաւ տակաւ դիւնի, թէյ, սուրճ, ևն: Այս անուն քանակութեամբ ուտելիքը 2 Թօնօ է քիչ պակաս կը կոչէ:

Տեսուչ՝ Որդեակ իմ, դու այժմ ուսումնաւարտ ես, և պատրաստ ես արեւմուտ երթալով վայրենիներու դէմ պատերազմելու: Կը կարծես թէ հարկ եղած ամէն յատկութիւններն ունիս:

Զինուորական վարժարանի աշակերտ՝ Կարծեմ թէ ունիմ: Մեր կարգին մէջ ամէնէն արագ կըցող վազողն եմ:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԻՍ ԵՒ ԵՓՐԱՏ ԳԵՏԵՐՈՒ

Թայտնի է թէ Տիգրիս և Եփրատ գետերուն վրայ շողենաւներ բանեցնելու արտօնութիւնը՝ կայս. անձնական Գանձուն նախարարութեան տրուած է կայս. Զեմանով: Շողենաւային այդ երթեւեկութիւնք երեք գլխաւոր ճիւղերու բաժնուած են. Ա. Պաղտատէն ի Պարսա, Բ. Պաղտատէն ի Մեզապոտ, Գ. Պաղտատէն ի Մեզապոտէն՝ երեք ժամ հեռի Հալէպէն: Այս երեք ճիւղերուն հարկ եղած արհեստական քննութիւնները կատարելու համար կայս. անձնական Գանձուն նախարարութեան կողմէ Զրանսայէն երկու երկրաչափներ բերել տրուելով, այդ կողմերը զրկուած էին:

Արդ, այդ Փրանսացի երկրաչափներու կողմէ տրուած տեղեկագրոյ մէջ համաձայն, Պաղտատէն-Պարսայի ճիւղի մասին որ և է գործողութիւն կատարելու հարկ չէ դատուած, որովհետեւ գետի այդ մասին վաղուց անտի բաց է և արդէն շողենաւներ կը ըսնին: Հալէպի մասին համար ինչ ինչ արհեստական գործողութիւններ կատարել հարկ դատուած է, որովհետեւ ամառը երբ ջուրերը կը քաշուին գետի այդ մասին մէկ քանի կէտերուն վրայ նաւարկութիւնք կը դժուարանան: Մուսուլ-Պաղտատ ճիւղին համար ևս տեղեկագրած են թէ ի վաղուց անտի քարեր գտնուելով, նաւարկութեան արգելք կըլլան, հետեւաբար հարկ է այդ քարերը մաքրելով, գետին այդ մասը նաւարկելի վիճակի վերածել: Երկրաչափք յայտարարած են նաև թէ այդ գործողութիւնները կարելի է քիչ ժամանակի մէջ կատարել:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մարտ 12 թուականաւ Լօնտընի Թայմզի իւր յատուկ թղթակցէն քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ ամսոյ 6ին Բարլամէնքի մէջ հարցման առարկայ եղած Զէյթունի մէջ 400 մանկանց թանաւորուած ըլլալու լուրը, հարցաքննուելով հաստատուած է թէ հինն չունի, և թէ այդ գաւառին մէջ այդպիսի դէպք մը պատահած չէ:

Այնթապի կեդրոնական Թարքիոյ ձեմարանը ի հիմանէ հոյ ճարակ եղած ըլլալն լրագիրք ծանուցած էին:

Այժմ այդ ձեմարանը վերստին կանգնելու համար ինչպէս ի Միացեալ Նահանգս նոյնպէս և Անգլիոյ մէջ հանգանակութիւններ ըլլալու վրայ են: Անգլիական լրագրող մէջ Ապերտին, Բինէյրա, Զ. Պրայս, Զօն Գընլիք, Զ. Ս. Հուայթ, Թ. Ու. Պրաունտտրագրութեամբ հրատարակուած յայտարարութիւն մը հրաւէր կը կարգայ հասարակութեան 3,000 Անգլ. Ոսկի հանգակել այդ նպատակին համար:

Մարտ 28 ի Հինգէլթի գիշեր Թրքաց Սուլթանին ծննդեան տարեդարձն ըլլալով Գուլ-Գաբուի Ազգային Պատրիարքարանն և Երուսաղեմատունն լապտերներով և կանթեղներով զարդարուած են: Նոյնպէս և Մայր Եկեղեցւոյ դուռը: Մայր վարժարանի ուսանողը Սուլթանին անուան ձօնեալ երգեր երգած են: Պատրիարք Խորէն Սրբազանի Մարքիթիլիքին զնակարանն ամենայն չքեր թելեմով լուսազարդուած է և զարդարեալ հիւրեր ընդունուելով Սուլթանին անգին կենաց համար ջերմ բարեմաղթութիւններ եղած են:

Գոհութեամբ կ'իմանամք թէ Մայր Եկեղեցւոյ քահանայից դասն աւագէրէց ընտրած է Տ. Եղիշէ հանրածանօթ քահանայիս իսկ լուսարարապետութեան պաշտօնն յանձնուած է Գուլ-Գաբուի դոսի եկեղեցւոյ Տ. Նաչատուր քահանային:

Սօլդ Լէյք Սիթի յետեւահաղի ձիւն տեղացած է: Զիւրհ հաւելէն վերջն առ նուազն մէկ քաւորդ մատնաչափ խոտութեամբ աղթողուցած է գետինն վրայ: Անտարակոյտ այս աղը նոյն քաղաքի մօտ գտնուած Աղի Լէյն շողեցած է:

Կոստանդնուպոլսոյ «Մանգու-մէյի Էֆէնար» թերթը ինն ամսոյ չափ դադարեալ մնալէ ետեւ Մարտ ամսոյ 28ին սկսած է իւր ամենօրեայ հրատարակութիւն, կըսէ Արեւելք, երախտագիտան յօդուածով մը, յորում կը յայտարարէ թէ վեհ. Սուլթանին մասնաւոր մէկ շնորհիւ և եթ կարող կը լինի իւր զալ վերստին:

Ինչպէս վանայ մէջ, նոյնպէս յԱտուլէճվազ երկրաչափ պատահելով 148 տուններ բոլորովին փրած և 240 տուններ անբնակելի դարձած են:

Պատրիարք Խորէն Սրբազան կրօնական ժողովոյ որոշմամբ մի կոնգակ ուղղած է Փարիզու Հայաստանեայց Մատրան Հովիւ Արթ. Տ. Սահակ քահանայ իւթիւնեանի հաստատուելով զանի իւր պաշտօնին մէջ:

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է

ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱԶԳԻՆ ՇԱՀԵՐԸ

Ե Ի Մ. Ա. Ա. Յ. Ե. Լ.

ԺՈՂՈՎՐԻՒՆ:

Այս բանիս նոր ապացոյց մը ալ տուած ըլլալու համար և ամէն կարգի Հայ-Ամերիկեան ազգայնոց ԱՐԱՐԱՏն առաւել դիւրամատելի ըրած ըլլալու համար, հետեւեալ զօհողութիւններն ևս կընեմք, որք են. Ապրիլ ամսոյ մէջ Միացեալ Նահանգաց որ և է կողմէն մեզ մէկ տօլար զրկող իւրաքանչիւր նոր բաժանորդ: ԱՐԱՐԱՏն պիտի զրկեմք մինչև ներկայ տարւոյ վերջ, որ ըսեմ է, ինն ամսական միայն մէկ տօլարի:

Նաև՝ սոյն ամսոյ մէջ պիտի ընդունիմք քաւորդաւորաբաժանորդագրութիւններ. այսինքն ԱՐԱՐԱՏն որ և է թուէն սկսեալ երեք ամիս պիտի զրկեմք մեզ վճարեալ 50 սէնթի փոխարէն:

Այս զօհողութիւնները միայն Միացեալ Նահանգաց համար են:

Այս զօհողութիւնները միայն Ապրիլ ամսոյ մէջ ընդունուելիք նոր բաժանորդագրութեանց համար են:

Այս զօհողութիւնները միայն ԱՐԱՐԱՏն ամէն կարգի ազգայնոց դիւրամատելի ընելու համար են:

ՄԻ՛ ՍՊԱՆԻՔ

Դրկեցեմք մեզ ձեր անունն, հասցէն և բաժանորդագրին: Ապացուցեմք մեզ ձեր բարի կամքն: Այս պատեհութիւնն Ապրիլ ամսով կը վերջանայ:

ՄԻ՛ ՄՈՒՆՆԱՅ

Որ ԱՐԱՐԱՏ կ'իմանայ չէ այլ երկ-շարաթաթերթ է. տարեկան կը հրատարակուի քսան և վեց թերթ, և որեւէ թուէն սկսելով կրնաք բաժանորդ գրուիլ. անպատճառ տարւոյն սկիզբէն գրուիլ հարկ չէ:

ԱՅՍՈՐՈՒՆ ԳՈՐԾԸ ՎԱՂՈՒՆ ՄԻ՛ ԶԳԻՔ:

